

իշխանութեանց հասնինք. աճապարէ՛, ե՛կ, վասնզի քեզ եւ Վահրամ
Գնունուոյ կը սպասեմ, որ միատեղ եւ համաձայն շարժինք: Քաղաք
եւ շէն տեղ մեր տեսութիւնը խօսքի եւ կասկածի առիթ կրնայ լինիլ,
այսպիսի առանձին տեղ յարմարագոյն դատեցի. ուստի մ՛ուշանար,
վասնզի դանդաղելու ժամանակ չէ: Ողջ լեր»:

– Կը տեսնես, իշխան,— ըսաւ,— որ բու կնիքդ՝ համախոհ եւ
համակամ բարեկամներդ քովդ ժողուելու համար գործածեցի. ես չեմ
ուզել, որ այսպիսի բարեկենդանի օրեր տիւուր եւ միայնակ անցնես:

Բայց այս խօսքերը չիմացաւ անգամ Մուշեղ, վասնզի խոր
մտածութեան մէջ էր թաղուել: Ուստի զինք այն սենեկին մէջ թողլով,
Յովնան ուրիշ սենեակ մը մտաւ, ուր առանձին մարդ մը միայն
նստած էր եւ մեզ քաջածանօթ խոսքով Ակեացի:

– Եղբայր, այս ինչպէ՛ս տեղ բերել տուիր զիս գիշերով,— ըսաւ
ծիծաղելով.— ուսկի՞ց գտար այս գազանաց բոյնը եւ կիսակործան
քաղաքը այս եղեգնուտին մէջ:

– Չե՞ս գիտեր, եղբայր, յիշատակարանաց երեւելի Օձն քաղաքն է
այս: Ոայց հիմա թողունք անցեալը, նայինք ներկային. իմացա՞ր թէ
ո՛վ հիւր ունիմ այստեղ:

– Ո՛չ, հիմա եկայ Սասնոյ. ամիսն անցաւ, որ զքեզ չեմ տեսեր. եւ
անգործութենէ սկսել էի ձանձրանալ:

– Մուշեղ Վահեւունին կալանաւոր ներսն է:

– Այդ չարագործը, այդ արիւնարբու գազանը, որ բոլոր
Վասպուրական արեան եւ սուգի համակեց:

– Նա ինքն. բայց երկու ուրիշ ընկեր էլ ունի:

– Երկու Վահրամները: